

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
Ամերիկա
2 Տղ. 30 սէնդ
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր :

Հասցէ

DİRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

2. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 4 ՇԱՐԱԹ 1902

ԹԻԻ 249

ԿՆԱՍՊԱՆ ԶԱՅ ՌԻՍԱՆՈՂԸ

Նանսի 6 Մայիս

Մէօրթ-է-Մօզէլը դատարանն այսօր կը դատէ Հայ
բժշկական ուսանող մը՝ Ռուբէն Միսիան կամ Միսի-
եան, 36 տարեկան, որ 1901 օգոստոս 4ին՝ երեկոյ-
եան ժամը 10ի մօտերը վեցհարուածեանով ուղեց ըս-
պանել իր կիներ, զայն նեղ փողոցի մը մէջ առաջնոր-
դելով: Կինը՝ որ կիսամահ հիւանդանոց փոխադրուե-
ցա՝ օգոստ. 22ին մեռաւ: Միսիան իր կնոջ՝ Էմիլի
Լաշօի հետ ծանօթացեր էր 1900 թուականին, երբ օ-
րիորդը որ վարժուհի էր, փոքրիկ ծածկոցով ինքն
կրնէր Բարիդ, սեպտ. ամսոյն մէջ: Օրիորդը՝ հակառակ
իր ծնողաց զիմարդութեան, Միսիանի հետ ամուսնացած
էր նոյն տարուան նոյեմբերին: Ամուսնութեան առաջին
ամիսներն բաւական խաղաղ անցան, բայց քիչ առ քիչ
գետտի կիներ վերահասու եղաւ թէ իր էրիկը չէր գոր-
ծադրեր այն խոստումներն որ նա ըրած էր իրենց նը-
շանուած ժամանակ: Բնաւորութեամբ՝ խորապէս եսա-
սէր, վայրենամիտ և կեղծաւոր Միսիան՝ հակառակ իր
ստացած կրթութեան, կ'ուզէր ազատին դեր կատարել
առ իր կնոջ, ասկէ վատ, խիտո նախանձոտ ըլլալով,
իր կինը կը փակէր իրենց բնակարանին մէջ և բնաւ
թոյլ չէր տար դրսի հետ յարաբերութիւն մ'անենալու:
Կինը՝ սակայն բնաւ կասկածի տեղի չէր տար իր
էրկանը, նա ստացեր էր լաւ կրթութիւն մը, ունէր գե-
ղեցիկ սկզբունքներ, մաքուր վարք, բաղքը և համա-
կենսող բնաւորութիւն և երկչոտ բնութիւն:

Օրիորդը 10 000 ֆր. օժիտ բերած էր ամուսնու-
թեան ժամանակ: Միսիան մէկտարուան մէջ անոր մե-
ծագոյն մասը ծախսեց:

Մի օր կինը զգալով որ յղի է, իր ուրախութիւ-
նը էրկանը յայտնեց, որը փոխանակ ուրախանալու,
միտքը դրաւ երախտն ունշացնել, մանկամարդ կինը պար-
զապէս մերժեց Միսիանի առաջարկութիւնները, ասոր
վրա, Միսիան սկսաւ չարաչարել իր կինը:

Միսիան 1901ին, յուլիս ամսուն որոշեց Նանսի
գալ իր ուսմունքն շարունակելու: Նանսիի Ռաֆինէլ
փողոցին մէջ բնակարան մը վարձեց և մինչև որ իւր
կահ կարասիքն այնտեղ փոխադրուին, կնոջ հետ միա-
սին Սթրասպուրկ գնաց, ուր սկսաւ ստնտու մը փըն-
տոնել: Կ'ուզէր մանկիկը ստար երկրի մէջ թողլով իւր
մօրմէն բաժնիկ և այսպէսով աւելի բռնանալ մօրը վը-
րայ: Ժամանակ մը իւր կնոջ խորհուրդ տուաւ ամուս-
նալուութիւն խնդրելու: Սպանութեան օրը Միսիան իր
կնոջ հետ ընթերց և յետոյ քացին միասին գարեջուր
զնել սրճարանէ մը: Ետոյ պատճառ բանելով թէ կի-
նը սրճարանի մէջ գտնուող յաճախորդներուն նայած է,
մօթ և նեղ փողոց մը տանելով երկու գնդակ պարպեց
խնդճ կնոջ վրայ, բայց միայն սէկը դպաւ: Սարսափելի
ցուեր բաշխէն և մանկիկ մը աշխարհ բերելէն յետոյ
օգոստ. 22ին մեռաւ կինը:

Ոճիրը ցործելէն յետոյ Միսիան փախած էր և
ուզած էր ապաստանիլ հայրենակցի մը մօտ, բայց նա
մերժելով զայն, Միսիան կը փախչի Լիւնէվիլ, անկէ
Օսթմանտ և Լոնտրա: Լոնտրայի մէջ սրճարանի ծառայի
մը հետ կը ծանօթանայ, որու հետ միասին կուգան Մէց:
Միսիանի նպատակն է հղեր իմանալ թէ ի՞նչ հետեանք

ունեցաւ կնոջ վիրաւորումը: Ուստի ինք Մէջի մէջ կեղծ անուշով մը պահուեցելով, սրճարանի ծառան կը զրկէ Նանսի, բայց վերջինը թակարթի մէջ իշնալով կը ըստիպուի յայտնել Սիսլեանի հասցէն. նոյն իրիկունը կը ձերբակալուի Սիսլեան:

Հարցաքննութեան ժամանակ Սիսլեան և ոչ մէկ ցաւ յայտնէր է իր գործած ոճրին համար, եւ իրեն, ուղղուած հարցումներուն կամ խուսափողական պատասխաններ կուտար և կամ բնաւ չէր պատասխանէր: Բայց չի կրցաւ ուրանալ թէ կանխօրէն մտածած չէր իր ուժիրը, բանի որ քանի մը օր առաջ վեցհարուածեան մը եւ երկու դանակ քնած էր: Սակայն Սիսլեան միշտ պընդած է թէ ինքզինքը անմեղ կը կարծէ եւ ինքն իրեն կատարած գործին պատասխանատու չի համարիր, ուստի կը խնդրէ յիմարաբուժ բժիշկներէ բննուիլ:

Դատաւարութիւն

Նանսի 7 մայիս

Դատաւարութեան ժամանակ Ռուբէն Սիսլեան վերին աստիճանի ամբարտաւան եւ նոյն իսկ յաճախ իրր զիրք մը ունէր: Միշտ կը պնդէր թէ ինքը անմեղ է եւ չէր հասկնար թէ ինչո՞ւ զինքը ձերբակալած են եւ ինչ իրաւունքով կուգին զինքը դատել, եթէ նոյն իսկ յանցաւոր ալ եղած ըլլայ. . . եւ ասոր նման ուրիշ ալլանդակութիւններ: Դատուելու ժամանակ դատուորները պահանջեցին որ Սիսլեան ներողութիւն խնդրէ իր հանգուցեալ կնոջ ծնողներէն որոնք ներկայ էին հոն: Սիսլեան մերժեց է, միայն «կը ցաւիմ» ըսեր է: Այս մերժումը շատ գէշ ազդեցութիւն ըրեց է ներկաներուն վրայ, որոնք սարսափի ու զարհուրանքի աղաղակներ ու բացագոնչութիւններ արձակած են ոճրագործին այդ ընկեր ընթացքին համար:

Սիսլեանի փաստաբանը իր պաշտպանողականը վերջացուցեր է ոճրագործին անպատասխանատուութեանը վրայ ծանրանալով. իսկ դատաւորները նկատի առնելով թեթեւացուցիչ պարագաները — որովհետեւ յիմարաբուժելու բնութիւնը Սիսլեանի բիշ մը նպաստաւոր ելած է — դատապարտեցին զՍիսլեան 20 տարուան տաժանակիր աշխատութեան եւ 10 տարուան արգելքի, այսինքն 20 տարուան տաժանակիր աշխատութիւնը վերջացնելէն յետոյ Սիսլեան չի կրնար ֆրանսական հողի վրայ ոտք դնել ամբողջ 10 տարի:

ՄԵԼԻՔ Ս. ԳԱԻԻԹ-ԲԷԿ

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

— 0 —

Շաբթուս Վառնայէն մեզ շրկուած երեք նամակներուն կը փութանք պատասխանել:

Առ Տ. Յ. Թ. — Բաքուական կաճառի զաւեշտական յօդուածը հեղինակութիւն չէր, այլ՝ Պուլկարերէնէ թարգմանութիւն:

«Իսկէնտէրիտիս Տայիեանիս» անունով ալ մարդ չի կայ ոչ միայն հոս այլ նաեւ բովանդակ Պուլկարիոյ մէջ: Անիկա կեղծանուն մըն է զոր կրնայ ուզողը գործածել:

Առ Տ. Մ. Պ. — Հրապարակաւ, յականէ անուանէ, այսինքն որոշակի մէկուն դէմ դրողը՝ ինքն ալ իր իսկական անունն ու մականունը յայտնելու է: Արդարութեան ու ճշմարտախոհութեան այս տարրական օրէնքը չի յարդողները՝ ՎԱՏ և ՎԱԽԿՈՏ զրպարտիչներ կը ճանչցուին ամեն երկրի մէջ, որոնց գրածներուն ամենեւին կարեւորութիւն չեն տար խոհակա՞ն անձինք:

Այս անգամ ալ «Իսկէնտէրիտիս Տայիեանիս» կեղծանունան տակ ծածկուող մեր հակառակորդներուն (ականջը խօսի Հ. Շէվգիրին և այլոց) անամօթ զրպարտիչներ ըլլալնուն մէկ նոր ապացոյցն ալ սա է որ, եթէ մեզի վերագրելու զածներին ճշմարտութիւններ էին, ինչո՞ւ զանոնք վեց տարիներէ ի վեր չի հրապարակեցին, ինչո՞ւ պապանձած էին, ուսկի՞ց կը վախնային, մինչդեռ մենք իրենց և իրենց պէսերուն զեղծումներն ու մոլութիւնները առաջին օրէն իսկ կը հրապարակէինք ու կը ձաղկէինք անվախ համարձակութեամբ:

Իսկ Որբախնութիւն այն ատենուան Գործ. ժողովոյ դէմ գրելնաւ պատճառն էր՝ ինչպէս կը յիշեն ընթերցողք, ազգասէր (?) Գուրպէթի (այն ատեն ատենապետ) հաճութեամբը Աղգային Հիւանդանոցի սիկարի թուղթին դէմ ուրիշ սիկարի թուղթ մը հրապարակ հանելը, բան մը որ բացի Գուրպէթիան խմբակէ, արտասահմանի ամբողջ հայութեան սրտին ցաւ պատճառեց, և իրաւունքի խմբագիրը մեզի դէմ կատղեցաւ՝ իր պաշտպանութիւնը վայելող Գործ. ժողովոյ առած նոյն ազգամիտ քայլը մատնանիչ ըրած ըլլալնու համար:

Սոյն խնդրոյն պատճառաւ Պ. «Արդարութիւն», իրաւունք և Գուրպէթեան» երրորդութիւնը (?) երթալով այն աստիճան անտանելի եղաւ որ, ալ զինքը վաճակեցինք ու յարաբերութիւննիս խզեցինք:

Առ Տ. X. — Շնորհակալ ենք Ձեր հոգածութենէն. Ամենեւին վշտացած չենք. Ձեզմովը ու մոլութիւնը ձաղկող հրապարակագիրը միշտ կը հալածուի, բայց նա առանց վհապելու կը շարունակէ իր գործը:

ՎԷՍԷԼՕ ԽՈՒՄԲԸ

Յառաջիկայ շաբթու վառնայի ամեն ազգի թատերասէրները Վէսէլօ Հայ թատերախումբը իրենց մէջ տեսնելու հաճոյքը պիտի ունենան:

Խումբը ներկայ ամառնային շրջանը պիտի անցնէ ի հաճի Բանաթօ Թատշոն Պորիս:

ՀՈՎԱՆՈՑ ԵՒ ԱՆՑՐԵՒՆՈՑ

Հովանոցին ծաղումը շատ հին է. Չինացիներու, Եգիպտացիներու և Ասորեստանցիներու օրով իշխանները միայն կը գործածէին. Նինուէի և Ճավայի աւերակներուն, Մէմփիսի և Թէփէի պալատներուն, գերեզմաններու որմանկարներուն և Յունաստանէ ու Ետրուիայէ եկած նըկարազարդ անօթներուն մէջ վաղեմի հովանոցներու արտատպումը կայ, Հաւանաբար Բորգուէն նաւարկուք Ափրիկէէն Եւրոպա մտցուցած են հովանոցը: Պրանսայի մէջ ԺԶ. դարուն երկրորդ կիսուն միայն մտաւ հովանոցը Չինաստանէ կամ իտալիայէ: ԺԷ. դարուն սկիզբն անցաւ Անգլիա: Գոսկ շինող արհեստաւորներուն մենաշնորհն եղած էր հովանոցը. 1640ի հովանոցը շատ խոշոր էր և 3—4 լիպրա կը կշռէր: Փայտէ կոթը 1,20 մէթր երկայնութիւն ունէր. Առաջ կմախքը կը ծածկուէր կաշիով. մոմալոծ կտաւով և մինչև իսկ գունաւոր թղթով. 1789ին ընդունուեցաւ գեղին, վարդափայլ և կանանչ անդուս:

Վերջապէս 1825ին, նորաձեւութեան կարգանցաւ մութ գոյնն որ ցարգ կը դործածուի. 1815էն առաջ հովանոցի գործարան չկար Եւրոպայի մէջ: Ի Բարիզ հովանոցի կոթերը կը հաւաքէին և գաւառները կը զրկէին ուր մէն մի խանութպան իր կամ յաճախորդին ճաշակին համեմատ կը շինէր հովանոցը: Բարիզի մէջ առաջին գործարանն հիմնուեցաւ 1816ին, Մ. Կրիլէրի կողմէ: 1846ին Մ. Բիէռ Տիւշան, մեքենագէտ ի Լիօն, հնարեց պողպատէ խողովակները: Անցրինոցը որ մինչև 1816 երկուք ու կէս քիլօ կը կշռէր, այժմ 300 կրամը չանցնիր, և գինը, որ առաջ 300 շրշ էր, հիմա մինչև 10 շրշի իջած է:

Արեւելքի մէջ ալ շատ հին է հովանոցներու գործածութիւնը: Ազնուական տիկիները գերիներու միջոցաւ իրենց առջևէն տանել կուտային հովանոցները, Հռոմայեցի տիկիներու հովանոցները կը գտնուէին հնդկական պամպուլի կամ փըղոսկրեայ ձուլերու վրայ: Բաբոսի Ալէա գիցուհւոյն տոներուն ատեն կոյս մը հովանոց կը բռնէր արձանին գլխուն վերև: Պիլմանիոյ թագաւորը արքայական բնտանիքի անդամներուն և երբեմն ալ օտարականներուն կը շնորհէր մասնաւոր պատիւ մը որ էր մետաքսէ հովանոց մը: Վկայաւորը սանկրիտ լեզուաւ կը տպուէր ոսկի թերթիկի մը վրայ: Բարիզ Լուսնթագ

ԳԻՏԱԿԱՆ

Փայտերը և մանաւանդ գերանները փտելէ պահպանելու նոր միջոց մը հնարած են Գերմանիոյ մէջ: Կը բաւէ ելեքտրական հոսանք մը անցունել փայտին մէջէն, որպէս զի անոր բովանդակած հիւթը դուրս ելնէ. այսպէսով փտութեան պատճառ եղող տարրէն կազատի փայտը և կը գրմանայ դարերով:

Տօթթ. Թիւսօ՝ կոյրերու համար նոր դործիք մը հնարած է: Այս գործիքին հրաշքն այն է որ կոյրերը պիտի կարենան այսուհետեւ գրել եւ իրենց գրածը սրբագրել, թուաբանական գործողութիւններ կատարել և նկարել իսկ: Նոյն բըծիչին հնարած է նաեւ տեսալ մը սինեմատոգրաֆ որ կոյրերու մատերուն հպելով տեսնելու ճաշակը կուտայ անոնց:

ՍԱՌՈՅՑԻ ՎՐԱՅ

ԵԼԵՔՏՐՈԿԱՆ ՀԱՆՐԱԿԱՌՔ

— 0 —

Եւրոպական նշանաւոր թերթերէն ունիւր վերջերս՝ ցուրտ կլիմաներու վրայ խօսելու առիթով. Ռուսիոյ մայրաքաղաքին նկատմամբ ինչ ինչ շահեկան տեղեկութիւններ կը հրատարակէին. որոնցմէ հետեւեալները կը ներկայացունենք թերթիս աչնիւ ընթերցողներուն:

Ռուսիոյ կայսր՝ մեծն Պետրոս՝ 1703 թուականին նէվա գետին բերանը Սէն—Քէթէրսկուրկ կոչուած մայրաքաղաքը հաստատեց. որ այժմ 1,400,000 բնակիչ ունի: Այդ թուականէն առաջ Ռուսիոյ մայրաքաղաքն էր Մոսքուա. որ 1147-ին հաստատուած է և հիմա մէկ միլիոն բնակիչ ունի: Այս հանգեք, Ռուսիոյ կայսրերը սովորութիւն ըրած են իրենց թագադրութեան հանգէսը միշտ Մոսքուայի մէջ կատարելու:

Սէն—Քէթէրսկուրկի համար բռնած է թէ՛ «հիւսիսային Վենետիկ»ն է. իրօք ալ՝ չէնքերը հոն մեծ մասամբ ցիցերու վրայ շինուած են և քաղաքը բաժնուած է շատ մը կղզիակներու՝ նէվա գետին (և անոր բազմաթիւ ճիւղերուն) միջոցաւ. Բաց աստի, հոն կան նաեւ զանազան ջրանցքներ, ինչպէս Քաթէլին, Ճոնթանքա, Մօիքալ, Օպիօնտնիի կոչուածները, և «ժովային ջրանցք»ը. որ կառաւնորդէ մինչև Քրօնսթատի անառիկ նաւահանդիսորդ: Սէն—Քէթէրսկուրկ վեց մեծ բնական կղզիներէ կը բաղկանայ. որոնք հարիւր հաւի չափ մանր կղզիներով շրջապատուած են:

Նէվա գետը լայն է հոն, նաեւ խորունկ ու հոտանքն ալ զգալի: Ընդամենը 150 կամուրջ—որոնցմէ շատերը շարժուն «տուպաններով» շինուած են—մասամբ կը դիւրացնեն գետին երկու եզերքներու միջեւ. հազորդակցութիւնները, Անշարժ կամուրջներուն մէջ նշանաւոր են՝ Ալէքսանդր, Թաօիժքի և Նիքօլա անուանեալները:

Հակառակ այդչափ բազմաթիւ կամուրջներու, Սէն—Քէթէրսկուրկի ջուրերուն գիծերը այնչափի շատ են որ, երկու եզերքներուն միջեւ հազորդակցութիւնները ուրիշ միջոցներով ալ դիւրացնելու պէտքը կայ: Ուստի բազմաթիւ պղտիկ շոգենաւներ՝ քաղաքին զանազան մասերը իրարու հետ շարունակաբար հազորդակցութեան մէջ կը դնեն, և այդ շոգենաւներուն ընկերութիւնները աղուոր բարա կը վատըկին: Սակայն, պէտք է ըսել թէ, Սէն—Քէթէրսկուրկի մէջ ձմրան եղանակը խիստ է եւ կանխահաս ալ. նէվա գետը կը սառի. հոկտեմ-

բեր ամիսէն մինչև պարիլ, առնուազն 146 օր: Բնականաբար այն ատեն պղտիկ շոգենաւներուն երթեկութիւնները կը դադարին: Այսուհանգեք, հազորդակցութիւնները կը շարունակուին սառած գետին վրայէն, անուաւոր և սայթաքող կառքերու միջոցաւ, ինչպէս քաղաքի ալ. Բայց գետին սառած մակերեսով չարթ չէ շատ անգամ, տեղ տեղ սառի կոյտեր կը դժուարացնեն յարաբերութիւնները. մանաւանդ երբ առատ ձիւն տեղայ: Ուստի քաղաքապետութիւնը, անց ու դարձի համար պէտք եղած տեղերը մաքրել տալով, գետին մէկ եզերքէն մըսը, յատուկ փայտաշէն տեսակ մը կամուրջ (ժառանգ) հաստատել կուտայ սառոյցին վրայէն, ուրիշ կ'ապահովուի ժողովրդեան երթեկութիւնը:

Այս ձևով Սէն—Քէթէրսկուրկցիները՝ փոխադրութեան նորաձև միջոց մը վայելեցին: Ընկերութիւն մը ելեքդրական «Թրամվայ»ի երկու գծեր հաստատեց նէվա գետին սառոյցին վրայ. Մէկ գիծը, գետին ձախ եզերքէն — Անդլիական քարափէն — կը մեկնէր դէպի միւս եզերքը, դէմ առ դէմ, մինչև Մերսկույտի Պալատը և Գեդարուեստներու Ակադեմիայի Պաղի կղզույն մէջ. իսկ միւս գիծը, մինչև Քէթրսկուրկի կղզին մէջ Սուրբ Պետրոս և Պաւլոս Մայր եկեղեցին: Գիծին լայնքը՝ այդ տեղ մէկ քիօմէթր է:

Պէտք է ըսել թէ՛ առաջին անգամ չէ որ սառոյցի վրայ առժամացէս երկաթուղիի գիծ մը կը հաստատուի:

Ամէն տարի արդէն Բանտայի մէջ մեծ գետերու սառոյցին վրայ, երկաթուղիի գիծեր կը հաստատուին, ուրիշ ոչ թէ պարզ «Թրամվայ» մը, այլ՝ շոգեկառքներ իրենց կառախումբերով «բօֆ» կընթանան:

Շոգեկառքով սառոյցներու մէջէն համարողները՝ շիտակը դողալու բան է, ոչ թէ վախէ այլ շուրտէ: Այդ տեսակ ամուսնական համարողութիւն մը տարօրինակ կրնայ ըլլալ. բայց երբէք հրապարչէ՛ «Մեղրալուսինը սառոյցներու մէջ» անցընել. . . պոռոռ. . . ինչ պաղ բան: Ամէն պարագայի մէջ՝ այդ վերնագիրը մեր բանաստեղծներուն զրական երեւակայութեանը կը յանձնարարեմ, ատով ընտիր հատուած մը յօրինելու համար:

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

նիւ Եորթէն կը գրեն .

«Արիստոտել գեղեցկութիւնը բնութեան պատուական պարգեւներէն մէկը կը կոչէր. Սոկրատէս կարծաւ բռնակալութիւն, Պլատոն՝ բնութեան առանձնաշնորհութիւնը, թէոփիստոս՝ լըռին պերճախօսութիւն մը . Պէոգլինէս՝ ամենէն ազգու յանձնարարագիրը, թէոքրիտոս՝ ծաղիկով ծածկուած օձ մը, իսկ Ամերիկացիք կը կոչեն զանիկա խնկելի արքայութիւն .

«Ո՛վ գեղեցկութիւն, երկինքէն կուգաս թէ գոթութեն», Անիկա ուրկէ կուգայ չեմ գիտեր, սակայն զինք ստացող մարդը անշուշտ երկինք կը տանի. Փլորէնս-Պըրնս՝ իր սիրականը մեռցնելու յանցանքով դատապարտուած՝ ալատեցաւ, որովհետեւ իր անմեղութիւնը ապացուցանելու համար շնորհալի գեղեցկութեան մը փաստը ունէր. Խեղճ ծերունի դատաւորները ո՞րչափ հառաչեցին անգամ մըն ալ երիտասարդ ըլլալու, ո՞վ գիտէ :

..

Քրուստիոյ Հայերի հիշատակը Քորնէլիուս Վանտէրպելդի տունը ճաշելու բարեհաճեցաւ, որովհետեւ անոր կնոջ գեղեցկութեանը մինակ հաւնած, և ասպետական ճշմարիտ ոգով մը իր հիացումն ալ յայտնած էր. Քորնէլիուս Վանտէրպելդ ժառանգազուրկ եղած էր իր հօրը կամքին հակառակ այդ աղջկան հետ սմուսնանալուն համար, և հիմա կը յուսացուի որ Վանտէրպելդներու գերդաստանը զանիկա նորէն իրեն հետ միացնէ, որովհետեւ այդ աղջիկը իրենց անպտուտութեւր չըլլալէ զատ, իշխանի մը ուշադրութիւնն ալ գրաւեց :

..

Քուպելիք անունով ջութակահար մը եկաւ հոս Փեւոմանիայէն, 18 տարեկան երիտասարդ մը ունեւ ժաղերով և սեխոշոր աչքերով, որոնց համար խարտեաչ Ամերիկո հիները հոգի կուտան. Հինգ ամիս չընէր երեկոյթներու մէջ ջութակ ածելը, և հիմակ 100,000 տոլար գրամ չինած է. Անցեալ օր Պրուքլինի մէջ կիներ զիրար խնդդուած էին Քուպելիքը համարելու համար. Գէշ մաքով չէ գիտէք, այլ լոկ հիացումէ գրկեալ :

..

Մեռցայ, ըսելու որ Փլորէնս-Պըրնս հիմակ այն-

քան ուշադրաւ անձնաւորութիւն մը դարձած է որ, շարժական հազար տոլար վարձքով թատրոններու մէջ գործ կառաջարկուի իրեն, սա պարզ պատճառով ոչ հազարաւոր անձնաւորութիւններ լոկանոր ձայնը լսելու կամ շարժումը տեսնելու համար դրամ պիտի չի խնայեն .

«Ո՛վ գեղեցկութիւն, երկինքէն կուգաս թէ գոթութեն»
Ստրինսկայ

ՕԻՐԱՅԻՆ, ԿԱՅԾԵՐ

ԱՌ ԹԱԳՈՒՀԻ

Ապրիլ 8ի յիշատակին.

Թիքեո մը քրքումն
Ըղայի գոտարթուն.
Թառեի միշտ լանջիդ,
Պաշտելի Թագուհիդ :

Եւ կամ թէ ըղայի
Ծաղիկ մի պարսեղի.
Շինէիր ինձ փնջիկ՝
Դրօշմէիր համբուրիկ :

Կամ ասոյ յուսարիայ
Ըղայի վառ ի վառ,
Հսկէի քեզ վերեւ
Օստաց ալերեւ :

Թոյնիկ մը սիրասուն
Ըղայի գեղգեղում,
Անունդ երգէի
Յանկայի Թագուհի :

Բայց ինչո՞ւ կը մաշես
Սրիկդ սասկապէս,
Քեզ համար ես հագիս
Կը զոհեմ Թագուհիս :

30 Ապրիլ 1902

Ռուսճուր

ԼԱԼԵ

ՇՈՒԿԱՅԻ ԿԵԱՆՔԷ

—o—

ՍՆԱՆԿ ԽԱՆՈՒԹՊԱՆԸ ԵՒ ՓԱՍՏԱԲԱՆԸ

(Շար. անցեալ թիւէն)

—Ներեցէք, ես իմ վիճակս պարզեցի ձեզի. ի՞նչպէս կարելի է այս գործէն այդչափ դժուար հանել. անանկ բան մը ըսէք որ կարողութիւնս ներէ. հիմա ես ուրիշ ստակ գտնեմ.

—Ատիկա քու գիտնալիք բանդ է. «չըզ-չըզ էտէն նալչա տըր, իչ պիթիրէն ագչէ տիր» փաստաբանին վարձքը առաջուց մէկ կողմ չի դնուլը սնանկանալու չէ:

—Բայց ֆառթփուռթիւն Գէորգ աշան ինծի ըսաւ որ...

—Իշթէ անոր խաթրին համար 10—20 ոսկի պակաս կառնեմ, ամա՛ 25—30 ոսկի կանխիկ տալու էք, ապա թէ ոչ չենք կրնար ասանկ գործի մը մէջէն ելնել.

—Քանի որ անպատճառ պէտք է կըսես, աշխատիմ մընչեւ շաբաթ ձեզի 10—15 ոսկի բերել.

—Բիչէն քիչ 25 ոսկի մը առնելու եմ. շաբաթ օրը բերելու ես.

—Կաշխատիմ.

—Կաշխատիմ չիտեմ. շաբաթ բերես նէ ժամ մը առաջ կազատիս այդ նեղ վիճակէդ:

Բ.

Որոշեալ շաբաթ օրը սնանկը նորէն փաստաբանին կը ներկայանայ.

—Ի՞նչ ըրիր, դրամ բերի՞ր.

—Կէս մը խանութին աւարտէն կէս մըն ալ փոխ առնելով քան ոսկի կըրցայ ճարել, մնացեալն ալ բան մը կընենք. հիմա մեր ընելիքը ի՞նչ է.

—Մտիկ ըրէ որ ըսեմ. Մինաս Կեռասեանին տուած բօլիցաիդ պայմանաժամին երեք օր կայ. այն օրը չուկա չպիտի երթաս, անիկա բօլիցաին գանձումը կամ սնանկութիւնդ պիտի պահանջէ. այն իրիկունը խանութդ պաշտօնապէս պիտի գոցուի. Երկուստեք օրէն չըք պարտքերդ հաստատելու համար գտտարան հաւաքուին, այն ատեն ելան կելլաս դատարան կողմս.

—Ամա՛ն. կարելի է նէ՛ ես դատարան չի գամ.

—Զրկար. ի՞նչ վախկոտ մարդ. ես եղեր. թօփ նետողը քիչ մը քաջասիրտ ըլլալու է.

—Աղէկ ամա, ձեռքս չէ, կը վախնամ.

—Անցած օր ըսիք կարծեմ թէ նետելիքդ պարտութիւն չէ որ վախնաս. հիմա դուն գնա՛ եւ անհոգ եղիր.

Գ.

—Օ՛, եկա՛ր. ալ գործդ մնացած սեպէ. պարտապահանջներէդ Գրաբոսին փաստաբանը իմ մտերիմն է. Մինաս կեռասեանին մաղաղային փաստաբանն ալ ձեռքս է. անդին կը մնայ հաճի Զուռնաեանը որ քու բաւեկամդ է. անոր հաշիւը ամբողջ կուտաս կը մաքրես.

—Ըսել է որ ասանկով 10—15 օրէն նորէն խանութս կրնամ բանալ.

—Հապա՛. հիմա գործը մինակ մեծամասնութիւն դտնելու և *forfeiture* մը չինելու վրայ է.

—Մեծամասնութիւնը ինտո՞ր պիտի գտնենք.

—Մտիկ ըրէ որ ըսեմ. Բիացաին 1000 ոսկի պարտք ունիս. 3 քառորդը այսինքն 750 ոսկիի գումարը լրանալու չափ պահանջատէրերու հետ պէտք է յարմարիս. ասով մեծամասնութիւն ձեռք բերած կըլլաս. անկէց հտքը քօնքօրտաթօյի կը կանչեմ ու հարուրին 5 կուտամ կը լմնցունեմ.

—Ատոնք սուֆ ընելու համար ի՞նչ ընելու է.

—Ա՛լ գործը գիտէ. մէկին 100ին 50 կուտաս, միւրին 40 կուտաս կարգի կը դնես.

—Ըսածիդ նայելով, մէկին 100ին 50, մէկին 5, քու աշխատութեանդ վարձքը, դատարանի ծախք, ոսկի նանկ, աս գործը մաքրելու համար 5—600 ոսկի պէտք պիտի լլլայ.

—Էյ տահա ի՞նչ կուզես.

—Աղէկ ամա, ուրիշ պիտի առնեմ աամ, առաջին օրը ձեզի եկայ նէ՛ ըսի որ խանութիս մէջ 400 ոսկիի չափ ապրանք կայ.

—(Կամաց մը) ճանրմ, տահա ինձի չի դիմած հիչ ներս բան մը չի նետեցիր.

—Իշտահ չունի՛ր, քիտս լուահաթ չէ քի լօսմա մը բան նետեմ ներս.

—Զի հասկցար. (աւելի կամաց) հիչ տակդ բան մը դրած չե՛ս.

—Խանութիս մէջ քէչէ մինտէրէն պաշխաբան մը տակս դրած չունիմ.

—Ույտուրտուք մաքառնանքն թէրթիպինի. աղբար, հիչ 1—200 ոսկի պահած չե՛ս.

—Զէ՛ ճանրմ. չէ՛.

—Ի՞նչ պօշ խաֆա մարդ. ես եղիր. բայց ինչո՞ւս պէտք, դուն հիմա վաճառականներու հետ պիտի տեսնուիս, աղաչես, համոզես, վերջապէս բանի մը պիտի կապես. Ուրիշ դժուարութիւն մը տեսնես նէ՛ ես հոս կեցած եմ. Հա՛, նայէ, պիտի մոռնայի, աս շաբաթու 15 ոսկի պիտի

բերես. շատ պէտք ունիմ ասոր. չի բերես նէ գործիդ արդեւը կրլլաս.

— Ծանրմ, ուրիշ առնենք ո՞ր պիտի տանք:

— Ատոնք առաջ մտածելու էիր, կէս ճամբան մնալ չըլլար. սնանկութեանդ մէջէն մաքուր ելլելու ես նորէն պատիւ ունենաս: Հայտէ Աստուած հետդ ըլլայ, երթաս բարով. 15 օսկին շուտ ճարէ բեր:

(Շար.)

ՊԱՅՄԱՆԱՌՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

—

Այս ալ պիտի իմանանք եղեր. բայց չի զարմանանք, որովհետեւ մեր Մալիւմ աղան է ընողը:

Կը պատմեն թէ անցեալ օր Մալիւմ աղան, մեր պաշտօնակիցներէ մէկուն նամակ մը զրկած է, սա մտքով.

«Վերապալական իւրիսնամէի մի. թէ պէրիիդ սէր ի սրտէ.

Մառալականս կ'ուզիմ ուր՝ ձեր վասըթայովը սիմ մէծիտիյէ մի իյանէթէն Պատվիրարքաւրան ճամբիմ. անճախ, իւրիսնամէիդ մէջ իլան տի անիք թը՝ մեծապատիւ Մալիւմ աղաս՝ ազգասիրաբար, մարդասիրաբար վէ որբասիրաբար սիմ մէծիտիյէ մի կու ճամբէ ազգին որբերուն, վէղայրիհիւմ, վէղայրիհիւմ շարթու շուրութի մէտհիյէ մի տի անիք ձեր թարաֆէն. Աստուկ մէտհիյէ մի գրուիլ ուղեւուս մէֆումը սա է ուր՝ լաթէմսիլ մոմ պէօճէկիի պէս ֆրըլ ֆրըլ էթրաֆս դարձող թախըմ մի տուշմաններուս, պախուսուս մէկ քանի եէնի եթմէ թուլումպաճի ճահիլ ճիւմլիւքներուն՝ աս մեղաւորիս համար թամահքեար, կծոտ վէ վար եէմէլ ըսելնուն մանէն վէ մատտէթէն ճուղապ մը տուած, ու անոնց բերնին քաքա մի գրած ըլլիմ»:

թ. Ծ.

Մալիւմ Անճոտենց

Իմբագիրը Մալիւմ աղային այս արտառոց առաջարկը կը մերժէ. թէն Մալիւմ աղան անոր կըսէ որ, ամեն ատեն իր հանած թերթը անդիէն ասդիէն բերել տալով մինչեւ սահիպի իմթիւ ազին տողերը կը կարգայ (նոյնպէս Հայելիին), ըսել կուզէ որ համակիր է անոր թերթին, բայց տեսնելով սր անօգուտ են այդ պոլլամաները, բարկութեամբ կառնէ կը քալէ. Ծամբան բարեկամի մը հանդիպելով կը սկսի տէրտէշմիշ ըլլալ:

— Էֆէնտըմ, մեր զազէթաճի աղբարները թախըմ մի տակը դարտակ հավատիսներով խաֆա կու տանին ու՝ էսասլը մատտէները չին գըրեր. մէսէլա, ազգիս որբերուն, աղքատներուն, կարօտեալներուն համար սիմ մէծիտիյէ մի տի ճամբիմ Պատվիրարքաւրան, աս սէպէպով քանի մի սաթըր մէտհիյէ չին ուղեր գրել:

Բարեկամը զարմացած — Աֆ կընես Մալիւմ աղա ամա, ատ մէտհիյէն ի՞նչ պիտի ըլլայ. միթէ Ս. գիրքը չի՞ պատուիրեր որ «եթէ աջճեռքը ողորմի, պէտք է ձախը չի տեսնէ»:

— Էֆէնտըմ, ատոնք ճիպ դարտակ խօրաթաներ եին.

— Տէր ողորմեա, դարտակը ի՞նչ է.

— Քէրէմ արէ ուր ըսիմ. ատաւկ չարբուխ միւլահաղաներով է ուր հալխուն միտէն կու խառնուի ու կարօտներուն մէկը չողորմիր. Մատէմ քի բարան ես տի տամ, իմ ալ ըսածս ըլլալու է. մենք ալ ձեզ մարդ գիտցանք տէ բան հարցուցանք:

Այս վերջին խօսքերէն բարեկամը վշտացած՝ կառնէ կը քալէ:

Մալիւմ աղան, ինքնիրեն — Խիյճս հանդարտ է, մատէմ քի թէքլիֆս խապուլ չին աներ, վէ բօթա բարասին ալ կուղեն ինձմէ հանել, ես ալ չիմտիլիք աս մէպլաղը ճամբած կը սեպիմ:

Ու մէծիտիյէն մէկ գրպանէն հանելով՝ միւսին մէջ կը տեղաւորէ:

Մ.

Բոժ. — Աստուած ընդունելի ընէ(?):

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, թատերական ազգեր, տոմսակներ, գիրք և յայտարարութիւններ:

Գիները յոյժ դիւրամատչելի:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

Այցետոմս տպագրել տուողներուն զայն գործածելու հրահանգ մը նուէր կը տրուի:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ



ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թէև Տօպրիչը Պուլկարիոյ պզտիկ քաղաք-
ներէն մէկն է, ուր նկարչութեամբ և լուսանը-
կարչութեամբ կը պարապիմ. ու թէև գտնուած
միջավայրս շատ յարմար չէ յառաջդիմութեան,
բայց միշտ աշխտած եմ արհեստիս գիտական
և արուեստական ամենավերջին կատարելագոր-
ծութեանց քայլ առ քայլ հետեիլ, որուն շնորհիւ
այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբ
բը օժտուած գործիքներ որոնց հետեալ նկարչու-
թեան արուեստիս շնորհիւ կարող եմ արտադրել
ակոսանսխումանի ամենակատարելագործեալ պատ-
կերներ, զոր մասնաւոր կերպով մշակած եմ, և
որուն մէջ նկարչութիւնը մեծ դեր կը խաղայ:
Ասիկա փորձելը դժուար չէ, կրնաք Ձեր մէկ լու-
սանկարը զրկել իմ հասցէիս և պիտի ստանաք
մեծագործ արիւնակին ճիշդ նման, միայն 15 ֆը-
րանքի փոխարէն, այն ալ պատկերը ստանալէ
և հաւնելէ վերջը վճարելու պայմանաւ: Իսկ ա-
նոնք որ կտան վրայ իւղաներկ՝ բնական գոյնե-
րով պատկերին կուզեն ունենալ, պէտք է գա-
ղափար մը տան գոյնին նկատմամբ, (երեսի
աչքերու, մազերու և հագուստի գոյնը) բնական
մեծութեամբ, 35 ֆր. ի փոխարէն, վերոյիշեալ
պայմաններով:

Թէև շատեր ակոսանսխուման պատկերներ կը
պատրաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ ոչ
մէկինը կրնայ այնչափ կատարելագործուած ըլ-
լալ որչափ նկարչի մը պատրաստածները. վա-
սըն զի առանց կանոնաւոր ուղղութիւն ոչ մէկ ակ-
ոսանսխուման արժէք կրնայ ունենալ:

Յարգանք
Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ-մօթօկրաֆ ՏՈՊՐԻՉ

— Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԻՐ օգտաշատ հան-
դէսի Ապրիլի պրակը:

Տարեկանն է 15 ֆր. Հասցէն է

ՊԱՍՏԱՃԵԱՆ

112 Պուլկար Ռօշրշուտ Բարիկ

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՖ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւճիւ Ֆորալար վէ Հիքիայէլէր . Մալիւմա.
Թը Ֆէննիյէ . Լուլաթը Լէթայիֆ . Ֆէննի Էյլէնճէ-
լէր վէ Բէսիվի Պիլէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշր օլունան մէղբիւր քիթապըն պիլինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըմտգտաւըր Ֆէյ 2 ֆրանք:

— 0 —

ՄԱԽՈՒԳԻՐՔԵՐ

Հետեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին:

Լուսինեալ. Իշխան — Յրանսահայ Բառարան
գիրն 25 ֆր. ոսկեգրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինդլեան — Տեւական և գործնական
Բերականութիւն Պուլկարեէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրաթեան — Քննական պատուծիւ-
Արշակ Բ. ի և անոր Պապ սրբուհին. 2 ուկէս ֆր.

Շէյքսբիւրի Համլէթը. ողբերգ. 2 50 ֆր.

Թրթուումներ (ստանաւոր) 25 սնդ.

Հովասուն " " 25 "

Արտասուլթոր " " 20 "

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ
արար 50 սնդ.

Մահմուպիյէթին մի քեաֆաթը, դօմէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Գսգանճ զօճա եախօա Էնֆիյէճի, զօճէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность," — Варна